

լալ, բաւ համարիմ կարգալ միայն նա-
մակները մեծարոյ բժիշկներուն , որոնք
այդ գիշեր ո՛ր և է եզրակացութեան
չյանգնելով, և երկրորդ անգամ մըն ալ
չկարենալով գումարուիլ, փութացին գրա-
ւոր կերպով յայտնել իրենց անձնական
տեսութիւնները :

Ահա այդ նամակները նոյնութեամբ, և
իրենց թուականներուն կարգաւ :

Բէրա 25 փետր. 2 մարտ 1897

Մեծ. Տօք. Թորգոմեամ Էֆէմտի

Ատեմապետ Գատ. Ուսումնական խորհրդոյ :

Կ. Պօլսոյ Ազգ. վարժարաններու մէջ
առողջապահական կանոններու ի գործ
դրուելուն մասին Ուսումն. Խորհրդոյ ու
բոլորմը ամէնքիս գոհունակութիւն պատ-
ճառեց :

Պիտի խնդրեմ Ձեր Մեծապատուութե-
նէն, հաճէիք շնորհակալութիւններս մա-
տուցանել Պատ. Խորհրդոյդ որ այդ մա-
սին իմ կարծիքս ալ առնելու պատիւն
ըրած էր ինծի :

Իրաց արդի կացութեանը մէջ, մանա-
ւանդ շատ մը թաղերու անձուկ ու կող-
զիացեալ վիճակի մը մէջ գտնուիլը մե-
ծամեծ դժուարութիւններ պիտի յարու-
ցանէ անշուշտ , առողջապահական շատ
մը կանոններու կէտ առ կէտ գործադր-
մանը. այսու հանդերձ այդ արգելքները
պատճառ մը չեն անշուշտ որ չջանացուի
գէթ հիմակուհիմայ կարելին ընելու :

Առ այդ իմ կարծիքս է, առ այժմ բո-
լոր վարժարանները այցելու Բժիշկներու
հսկողութեանը տակ զննել և իրենց յանձ-
նել պարտուպատշաճը տնօրինելու հոգը :

Ուսումնական Խորհուրդը ատով վար-
ժարաններու առողջապահութեան խնդիրը
ամբողջովին լուծած չկրնար ըլլալ ան-
շուշտ , բայց կարծեմ խնդրոյն կարևոր
մէկ մասը գործադրուած կրնայ համարուիլ,
թողլով ապագային հիմնական ու ընդար-
ձակորէն պատրաստուած կանոններու կի-
րառումը :

Ընդունեցէ՛ք յարգանքներս
Տօքթ. ԴԱՒԻԹԵԱՆ

Թ Ո Ւ Մ Ա Խ Տ Ը

Ն Ե Ր Մ Ո Ւ Մ Ե Լ Ի Դ Ե Ղ Ե Ր

(Շար. Բզմ. էջ 223)

Prof. Jannelogue տեսնելով որ քլու-
ռաւոր զինքի ներմուծումներն կ'առողջացը-
նէին Քոխի միջրոպէն յառաջ եկած հի-
ւանդութիւնները՝ մարմնոյն ուրիշ մասե-
րուն մէջ — ինչպէս ոսկրներու , ոսկրա-
զօղերու մօտ — մտածեց նոյն դեղի ներ-
մուծումներով թրքերու վէրքերուն առող-
ջացումն ստանալ . տարակոյս չկայ թէ
այս դեղը՝ քանի որ մարմնոյն ուրիշ տե-
ղուանք նոյն միջրոպէն յառաջ եկած ախ-
տերը կը բժշկէ՝ պէտք էր նաև թոքախ-
տը բժշկել . սակայն դժբաղդաբար մինչև
այժմ եղած փորձերն ապարդիւն ելան .
գիտնականներու մեծամասնութիւնը մեծ
յոյս ունի ասոր վրայ և այժմ կ'ոգտում-
նասիրեն՝ զայն անփնաս թոքերուն հասցը-
նելու կերպը :

Մ'անկերպի (iodoforme) ներմուծում-
ներն ալ կ'առողջացնեն նոյն միջրոպէն
ուրիշ տեղուանք յառաջ եկած ախտերը .
սակայն թոքերու վրայ եղած փորձերն
ապարդիւն ելան : Արափան մանիշի նոր
մէկ քաղաղրութեամբ ներմուծումներ ընե-
լով 86 հոգւոյ վրայ՝ 22 առողջացուցած
է ու ինք թէ քլուռաւոր զինքին ու թէ՛
մանշակերպին վրայ մեծ յոյս ունի . բայց
ըստ իրեն պէտք է գտնուի այն մարմինը
որուն հետ միացնելով այս նիւթիքը՝ ընեն
թոքերուն մէջ այն՝ ինչ որ կ'ընեն ուրիշ
տեղ . — Tubercoline. — 1890ին Քոխ
կը հռչակէր « Գերմանական բժշկական
շարաթաթերթ »-ին մէջ՝ թէ գտած էր թո-
քախտին դեղը . քիչ ատենուան մէջ այս
լուրը բոլոր աշխարհ տարածուեցաւ և
ամէն կողմէն գովասանքներու հեղեղ մը
տեղաց գտնողին վրայ . ոչ ոք կրնար տա-
րակուսիլ այն լուրին վրայ՝ քանի որ հըռ-
չակողը Քոխն էր, նոյն ինքն թոքախտի

միջբրուպը գտնողը: Դեղին անունը դրուեցաւ ֆոխի tubercoline կամ աիշ. առողջանալու համար պէտք էր այս դեղէն հիւանդին 0,00 / c. c. ներմուծել ու շարունակել այսպէս մինչև կատարելապէս առողջանալը. սակայն փորձ ընդոնները շուտով տեսան դեղին անպատեհութիւնները. հիւանդները ներմուծումէն վերջ ուժով ջերմ մը կ'ունենային, ջերմ մը՝ որ կը տեւէր 20էն 12 ժամ, ինչ որ չափազանց զիրենք կը տկարցնէր, պատճառելով նաև գլխու ցաւեր, պտոյտներ և փսխումներ. և այսպէս այն հիւանդները որոնք այնչափ փափաքով և յոյսով սկսան այս դարմանը՝ նոյնպէս զգուանքով ձգեցին զայն... այսու հանդերձ Պեռլինի մասնագէտ բժիշկները կը յայտարարէին ֆոխին հետ թէ քիչ ժամանակուան մէջ կատարելապէս առողջացուած էին տասը թորախտաւորներ: Այս հակասական եզրակացութիւններուն առջեւ առնելու համար ամէն տեղ լուրջ փորձեր սկսան թիփօծոնին և Չէնթանի (Խաւիլոյ մէջ) ապացուցուցին թէ ֆոխի աիշը արեան մէջ ախտագրծութիւն մը յառաջ կը բերէ, սակայն զայս ստանալու համար՝ պէտք էր դեղը շատ աւելի նուազ քանակութեամբ գործածել քան ինչ որ կ'ընէր ֆոխ. այսպէս առջեւ կ'առնուէր ամէն անպատեհութեան: Մ'արայլիանոյ Խաւիլոյ երեւելի գիտնականը կ'ըսէր թէ իրօք ֆոխի աիշը մի քանի պարագաներու մէջ ուժեղ ազդեցութիւն մ'ունէր թորախտին դէմ. ու ինք Հոովմայ Բժշկական Դ. համաժողովին վեց հոգի առողջացնելը կ'աւետէր. ըստ իրեն՝ ասոր գէշ գործածութենէն է որ յառաջ կուգան բոլոր այն խանգարումներն որ առաջ կը պատահէին. այսու հանդերձ ինքն ալ կ'ընդունի թէ պէտք է շատ աւելի նուազ քանակութեամբ գործածել զայն. ինք կը սկսի $\frac{1}{2}$, միլիկրամ մով և եթէ հիւանդը որ և է նեղութիւն մը չունենար՝ կ'աւելցնէր — երկու երեք օրը անգամ մը — դեղին քանակութիւնը, դադրեցնելով անոր մատակարարումը երբ ամէն անգամ որ և իցէ խանգարում մը

յառաջ բերէ: Երբ թորախտ մը յառաջ եկած էր զուտ ֆոխի միջբրուպներէն՝ այս աիշէն կը յաղթուէր, հակառակ պարագային ո՛ր և իցէ զգուտ մը ստանալու համար պէտք էր ասոր միացնել նաև կալիոգիլը օրը տալով կրկուքէն երեք կրամ. այս կը մեղմնէ օտար միջբրուպները, իսկ աիշը ախտագրծութիւն յառաջ կը բերէ և կ'ուժովցնէ կազմուածքը. ասոր պէտք է քնականապէս միացուի նաև լաւ անուշոկ, խիստ առողջապահական կանոններ: Փոխի աիշը ժամանակին մոռացութեան մէջ ինկած էր, բայց այժմ կրկին գիտնականներու աշխատութեան շնորհ եղած է, ու Սքատիան յետ փորձելու զայն իր օդաբուժարանին մէջ կը յայտարարէ թէ հիւանդահիւմայ բժշկական պմենալաւ դարմաններուն մին է:

Եթէ ֆոխի աիշը ամէն պարագայի առողջութիւն չի պատճառեր, հետեւաբար իրմէ սպասուած արդիւնքը չընձայց՝ այսու հանդերձ բժիշկներն զիտցան գործածել զայն ուրիշ օգտակարագոյն պարագայի մը մէջ. այսինքն երբ թորախտի գոյութիւնն հիւանդի մը մօտ կարելի չէ որ և իցէ կերպով հասկնալ, այն ժամանակ այն հիւանդն որուն վրայ տարակոյս կայ, կը պահուի անկողին, ստէպ ստէպ իր մարմնոյն աստիճանն առնելով, յետոյ իրեն ֆոխի աիշով ներմուծում կ'ըլլուի. և եթէ անկից վերջ հիւանդը ջերմ ունենայ՝ անտարակոյս թորախտաւոր է. իսկ անոնք որ մինչև տասը միլիկրամ որ և իցէ խանգարում մը չեն կրեր՝ թորախտէ զերծ են:

ՇԻՃԱՐՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑ

1899ին Ռիշէ և Էրիքուր տեսնելով թէ շուրջ ախտագրծ թորախտէն հետեւցուցին թէ այս անսնոյ արիւնն հաւանականաբար թոյն մ'է ֆոխի միջբրուպներուն, ուստի կրնայ պատուաստի տեղ գործածել մարդուն համար ու այս հիւանդութեան առջեւ առնել. սակայն իրենց փորձերը անյաշող անցան, քանի որ շու-

բոտ է»։ Խոտալիոյ մէջ այս շիճին վրայ փորձերը կը շարունակուին ու զուցէ բժշկական վերջին համաժողովին մէջ՝ վերջնական վճիռը տրուի։

ՕՂԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

Օղաբուժութիւնն ինքնին չի բաւեր թուրքախոր բժշկելու, բայց մեծապէս կ'օգնէ ասոր ասողջացման։ Հայթէր տեսնելով որ կիրը պատրաստող գործատուները թուրքախոր չեն ըլլար, ջանաց այս դէպքը բացատրել, ըսելով թէ տաք օդ շնչելուն մէջն է որ կը կայանայ իրենց փոստագերծութիւնն և Տէ Ռէնցի 1889ին հիմնուելով այս դիտողութեան վրայ կը հնարէր տաք օդ ներշնչել տալու համար գործիք մը. սակայն այս միջոցը շատ յոգնեցուցիչ էր և հետեւեալ քիմիական, որով որ և իցէ հետեւող շունչեցաւ. արդէն եթէ պարզ տարութեամբ է որ պիտի մեղցուին միջրոպները, նախ հիւանդը կ'այրի ու յետոյ այս վերջիններս։

Ճնշում և աւտարացած օդ։ — Երբ թուրքախոր մը դժուարաշնչութիւն ունի, ճնշում (comprimé) օդ շնչել տալով կարելի է զինքը ազատել. կանոնաւորելով իր շնչառութիւնը՝ քանի որ ինք ստիպուած պիտի ըլլայ շնչել մեքենաբար և ճնշման աստիճանին համեմատ։ Ճնշում օդը օգտակար է նաև երբ շնչառութեան օգնող մկանունքները տկարացած են. այսպէս կը ստիպուին այս վերջիններս քիչ քիչ աւելի գործել ճնշման տակ և ժամանակով ասողջանալ, ճնշում օդը կ'օգնէ նաև մարմնոյն ընդհանուր փոխանակութեան (rechange) քանի որ այս միջոցաւ թորքերուն մէջ կը մոցուի առատ թթուածին։ Հիւանդներն այս օդերն ստանալու համար կը մտնեն փորքիկ սենեակներու ուր բժիշկը պէտք եղած ճնշումը կ'ընէ օդին, բռնելով հոն իր հիւանդները երկուքէն երեք ժամ։ Կան այնպիսի գործիքներ ալ որոնք փոխանակ բոլոր մարմնոյն վրայ ճնշում բանեցնելու մի միայն թորքերու վրայ կ'ազդեն. և ասոնք հիւ-

ւանդները՝ իրենք ալ առանձին կրնան գործածել։ Ախտաբան օդը թորքերուն պարզ մարմնամարզ ընելու համար կը գործածուի. վասն զի հոս հիւանդը ստիպուած է շնչել ստէպ ստէպ։ Խոտալիոյ մէջ օղաբուժութեան ամենագլխաւոր պաշտպանն Պրուանինն է. արդէն այսօր չի կայ թորքախորներու համար հիմնարկութիւն մը որ այս գործիքները շունչեցայ. ոչ ոք կրնայ ուրանալ օղաբուժութեան օգուտները. այս միջոցաւ կարելի է դուրս հանել այդ նիւթերը որ կը գոյանան շնչառութեան գործարաններուն մէջ և թուրքախորն նեղութիւն կը պատճառեն։ Օղաբուժութիւնը հրաշքներ կ'ընէ այն թուրքախորներուն վրայ՝ որոնց հիւանդութեան միացած է նաև կողախիթ ջերմը. ասոր օգուտները Պրուանինն այսպէս կը բացատրէ. կողախիթ ջերմի ժամանակ հեղուկներ յառաջ կուգան որոնք վնասակար չըլլալէն զատ օգտակար ալ են, վասն զի թորքն այս պարագային ճնշուած ըլլալով քիչ կը շարժի ինչ որ թոյլ կու տայ որ իր վէրքերն ասողջանան (վէրքեր՝ յառաջ եկած թորքախոր միջրոպներէն). վասն զի ինչպէս գիտենք, ուրիշ որ և իցէ տեղ վէրք մը հանգստութեամբ աւելի շուտ կ'առողջանայ, և Պրուանինն ասոր վրայ հիմնուած անցեալ ամառ Միլան գնաց իր մէկ նոր գտած գործիքը բացատրելու համար. ինքը թորքը անշարժ պահելու գաղափարը 1892ին յղացած էր և իրագործած մի միայն 1907ին, տասնութհինգ տարի վերջ. վասն զի դիւրին է հասկնալ՝ թէ ինչ դժուարին էր թորքը անշարժ պահելու խնդիրը լուծելը։ Ինք՝ իր գործիքով թորքերուն շուրջ անջնալ և չէզոք կազ մը կը մտցնէ, որ յաղթելով թորքին ներքին ճնշման կ'անշարժացնէ զայն. ու այսպէս թորքն իր վէրքերէն բուժուելու համար ամենայարմար վիճակին մէջ կը գտնուի. ըստ իրեն՝ թորքերուն անդադար շարժուելուն է որ շարունակ վէրքերը կը գրգռուին ու կ'ընդլայնան, բուժումը անկարելի ընելով. ինք իր ըսածները պաշտպանելու և իր գործիքին լաւութիւնը ցուցնելու հա-

մար՝ շատ օրինակներ բերաւ. իր ճառախօսութիւնն երեք օր տեւեց, ամենուն մէջ մեծ յոյս արթնցնելով:

Ոգոհի ներաշնչումներն ալ փորձուեցան՝ առանց մեծ արդիւնքներ տալու. մինչդեռ մեծ օգուտներ ունի բրտաձիկը. թթուածինը իրաւամբ այսօր թոքախտին քնիշնան կոչուած է. — *Gibbes* և *Shurly* Ամերիկայի մէջ փորձելով քրտի ներշնչումները, կ'առողջացնեն 27 թոքախտաւորներ. արդ կը սպասուի իրենց այս բնածններուն վիրահատատուութիւնը ուրիշ գիտնականներու կողմանէ: — 1891ին փէթէր կը յայտարարէր թէ քրտակերպի ներաշնչութիւնները թոքախտին դէմ մի հատիկ դեղ էին. և Սքառփան փորձելով զայն իր օգաբուժարանին մէջ չորս տարիէ ի վեր, կ'ըսէ թէ նոյն իսկ հինգ վեց օր վերջ առոր ներաշնչութիւններէն հիւանդին մօտ զգալի փոփոխութիւններ կը տեսնուին. քլոռակերպը կարելի է աւելի օգտակար կերպով գործածել՝ միացնելով առոր կրէօզոդ կամ կայազին. այս միջոցաւ նախ շնչարգելութեան դժուարութիւնները կը բարձուին, յետոյ կուրծքի ցաւերը. թուրքի մէջ քիչ քիչ միջրոպներու քանակութիւնը կը նուազի, եայլէն՝ Ներաշնչութեան համար ուրիշ բազմաթիւ դեղեր կան որոնց մէջ սակայն զլիսաւոր տեղը կը բռնէ *mentha piperita*ն, բազմաթիւ օգուտներ ցուցած ըլլալուն պատճառաւ. Գառսոն՝ ասով 20 թոքախտաւորներէ՝ 13ը կ'առողջացնէ (կրորդ շրջանի թոքախտ). իսկ աւելի թիթեւ թոքախտաւորներէն 28 հոգւոյ մէջէն քսանը կատարելապէս կ'առողջացնէ և հինգը կը բարելաւէ. արդէն Քոխ այս նիւթին ուժգին հականիւթիչ մ'ըլլալը ապացուցած էր. ու այս դարմանով միջին հաշուով տասնէն վաթսուին օրուան մէջ՝ (մանաւանդ եթէ ներաշնչութիւններուն մէջ քլոռակերպն ալ խառնուի)՝ թուրքին մէջ միջրոպները կ'աշնչանան. Գառսոն իննը տարիէ ի վեր աչքի ներքեւ ունեցած է իր առողջացուցած հիւանդները որոնց մեծ մասը ամուսնացած ալ է. և ոչ իսկ մէկը կրկին հիւ-

անդացած է. անփնաս դեղ մ'է և ամէն ոք կրնայ փորձել, միացնել առոր ալ՝ ինչպէս միշտ՝ լաւ օդ, լաւ սնունդ, առողջապահական խիստ կանոններ: Բեւեռի, քոկիտի ներշնչութիւններն ալ լաւ են, բայց նոյն արդիւնքը չեն տար:

Եւս բժշկութեան զլիսաւոր դեղերը կամ միջոցները աչքէ անցնելու՝ կ'եզրակացնենք այսօր որ թոքախտին առջեւ կ'առնուի

Ա. Ապրեցնելով հիւանդը միշտ առողջ և մաքուր օդի մէջ.

Բ. Շրջապատելով զինքը առողջապահական ամենախիստ կանոններով, կրկնավարակման առջեւ առնելու համար և արգելելու համար նոյն հիւանդութեան փոխանցումը:

Գ. Տալով առատ կերակուր. ջանալով ամէն կերպով որ թոքախտաւորին մէջ սնունդ մտնայ. նոյն իսկ դիմելով արհեստական միջոցներու կամ այնպիսի նիւթերու որոնք քիչ քանակի մէջ շատ սնունդ կը պարունակեն:

Դ. Օղաբուժական գործիքներով յարմար դատուած դարմանն ընելով, և ազատ ընելով հիւանդը այն բոլոր երեւոյթներէն՝ որ զինքը կը նեղեն:

Ե. Դեղեր տալով իրեն կամ ներմուտքներ և ներշնչութիւններ ընելով այն նիւթերով՝ որոնք հիւանդին յարմար պիտի դատուին մասնագէտ և քաջ բժշկէ մը:

Բուժարաններու մէջ, ուր այս հինգ միջոցները միացած են, առողջացողներուն թիւը օր ըստ օրէ աւելնալու վրայ է, ինչ որ պէտք է քաջալերէ թոքախտաւորները և իրենց յոյս ներշնչէ: Թոքախտը յամբարձակ հիւանդութիւն մ'է, հետեւաբար բժշկուելու համար պէտք ունի երկայն ժամանակի և համբերութեան, ու ամենազրկաւորը՝ բժշկուելու հաւատքի: Յուսամ թէ անօգուտ գործ մը չըրի յօղաձի մը մէջ ամփոփելով բժշկութեան արդի միջոցները և ծանօթացնելով մեր ազգի բժշկներուն խառնիւրդ յառաջագիտութիւններն այս ճիւղին մէջ և մի քանի մանրամասնութիւններ, որոնք գուցէ՝ հոս ծնունդ առած ըլ-

լալով՝ անծանօթ են իրենց: Այժմ ունեցած միջոցնիս զոհացուցիչ են, և վատահայտով մը կը սպասենք թոքախտի յառուկ զեղին՝ որ զուցէ այսչափ զոհողութիւններէ և աշխատութիւններէ վերջ՝ պիտի չուանայ գալու:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԱԶԱՆ



ՄՈՎԱԶՄԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Էջ 195. տող 8.

« Եւ Միհրդատայ իշխանութիւն գտեալ ի նմանէ (կեսարէն) զՊերգեայ քաղաքի, զօրավիգ օգնականութեան լինի Անտիպատրոսի հօր Հերովդի, կեսարու հրամանաւ: Սա շինէ զՄաթաքոս: Ու Ուղղ. « Հօր Հերովդի: կեսարու հրամանաւ սա շինէ զՄաթաքոս: և իշխանութիւն գտեալ յի մէջ ամփոփուած է նաև Անտիպատրոսի օգնութեան հասնիլը՝ որ առանց կեսարու հաւանութեան չէր կրնար ըլլալ. իսկ Մաթաքոս ընդարձակագոյն և պայծառ շինելու համար՝ պէտք էր ունենար բարձրագոյն հրաման և հռովմէական ոսկիներ, զոր հրամայողն կեսար անշուշտ տուած է:

Էջ 203. տող 10.

« Բայց ոչ ինչ զործ արութեան և քաջութեան եցոյց, այլ ուստիւնաց և ըմպելիաց պարապեալ, մօրից և եղբնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց. զիշավայրիս և զխոզս արածելով: Ու Ուղղ. ջնջիլ միջակէտը. և և առապարաց զիշավայրիս և զխոզս տարածելով: Արտաւազդ կը հալածէ և փախցնէ որսի ժամաւ նակ առապարներու իշավայրիքը և խոզերը: Կամ այսպէս. «(ի մէջ) մօրից և եղբնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց՝ զիշավայրիս զխոզս տարածելով: և Ու Ուղղ. տող 3.

« Այս Արգաթոս կոչիւր աւագայր՝ . . . որոմ յետոյ և տիքն. զայս ոչ կարելով

ուղղախօսել Յունաց և Ասորացոյ ո. Ուղղ. « որոմ յետիներն ո? »

Էջ 249. տող 2.

« Եւ արդարեւ թերրի թագաւորական զաստակերտն ո: Ուղղ. թերրի:

Էջ 256. տող 1.

« Իսկ Արտաշէսի հասեալ Երուսաղայ. . . և ի խորանս նորա Բնակեցաւ զայն գիշեր ո: Ուղղ. բանակեցաւ. Հմմտ. Նախընթաց էջ 255, տող 26. ևս էջ 256, տող 9:

Էջ 259. տող 8.

« Պատմի սորա ի նոյն աւուրս սերեալ ազգ և զորդին Տուրայ, պատանիս հինգ հանդերձ տասամբ ո: Ուղղ. կանամբ? որ կ'ըլլան տասն?

Էջ 269. տող 11.

« Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ, քանզի արդարեւ ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի ի ճշմարտութենէն, որ ունէր հասակ անդամոց համնատ քաջութեանն և առաքինութեան ոգւոյն որադոյ, և զեղեցկութեան ալեօք վայելչացեալ ո: Ուղղ. ուղղորդ? « քաջութեան ո: և « վայելչացեալ ո: հետ կը յարմարի՝ « ուղղորդ ո: ածականն ևս:

Էջ 271. տող 26.

« Վասն որոյ արժանի ըստ վաստակոցն պարգեւէ նմա Արտաշէս զմասն արքունի, որ ի շէնս Գողթան, և զմիտոս ակունս ո: Ուղղ. զմիտոս ակունս? Այժմու Ուրտու կամ Օրտու-պատն, կրնայ ունենալ առնչութիւն և Ուղղու ակունս ո: հետ եթէ ներելի ըլլար զրել « Ուրտու պատունս ո?

Էջ 283. տող 26.

« Եւ զԱրեղոյ զոմն ո: Ուղղ. Արեղոզոմն?

Էջ 290. տող 12.

« (Տիրան) և մեռաւ ի ճանապարհի, ձեռն հիսիտոյ կալեալ ո: Ուղղ. հիստոյ?

Էջ 299. տող 1.

« Եւ (Խոսրով) վանեալ սրով և զեղարդեամբ զհզօր զազգն զայնոսիկ, մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս ո: Ուղղ. Պատանեացն. հարիւր պատանիներու մէջէն, մէկը պատանդ կը վերցնէ: